

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Գրութեամբ խնդրուեց ներքին Գործոց Նախարարին միջնորդել ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՄԵՐ առաջ արձակել ս. Էջմիածնի Սինոդի անդամութիւնից Էջմիածնի միաբան Տ. Յուսիկ վարդապետ Զոհրաբեանին, որպէս զի կարգուի Մոսկուայի Լազարեան ճեմարանում կրօնուսոյց, համաձայն ճեմարանի վերատեսչի գրաւոր միջնորդութեան և Տ. Յուսիկ վարդապետի խնդրագրի։ 8 օգոստոսի, թ. 1126։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երևանի փոխթեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսին կարգադրել հանել տալ Երևանի Կոնսիստորիայի և Ղարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան արխիւներից Անիի վանահայրութեան և հողերի վերաբերեալ բոլոր փաստաթղթերն ու կալուածագրերն և անմիջապէս ուղարկել Նորին Վեհափառութեան ի տնօրէնութիւն։ 9 օգոստոսի, թ. 1128։

Կոնդակով թոյլ տրուեց Երևանի Հայոց փոխ-թեմակալ Տ. Խրիմեն եպիսկոպոսին, համաձայն իւր միջնորդութեան, բանալ թոխանշալու գիւղում եկեղեցական-ծխական դպրոց։ 9 օգոստոսի, թ. 1139։

Դիւանի գրութեամբ բացատրուեց Շամախու առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսին, որ Հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում պաշտօնավարող նոր ուսուցիչների համար քաղաքապետից կամ նահանգապետից հաճութիւն ինքն անձամբ պէտք է դիմէ և ստանայ։ 11 օգոստոսի, թ. 1144։

Կոնդակ Երևանի ս. Սարգիս եկեղեցու ծխական հոգաբարձութեան անունով, որով օրհնելով թոյլատրուեց բանալ եկեղեցու դաւթում ծիսական դպրոց։ 14 օգոստոսի, թ. 1145։

Կոնդակ վերոյիշեալի բովանդակութեամբ Դարղալու գիւղի ծխական հոգաբարձութեան անունով։ 14 օգոստոսի, թ. 1146։

Նորին Վեհափառութիւնը ս. Էջմիածնի ս. Մինոզի 1913 թ. յուլիսի 23-ի № 1670 յայտարարութեան վրայ հետևեալ մակագրութիւնն է արել. «Համաձայն ս. Էջմիածնի ս. Մինոզի քննութեան և եզրակացութեան՝ ներում ենք Վաղարշապատի աղքատ ծխականներին, պատուիրելով նոյն Մինոզին անպահանջ թողնել նոցա վրայ մնացած 1599 ռուբլի 25 կոպ. ապառիկ հարկերը, իսկ յայտարարութեան մէջ յիշուած մնացեալ ապառիկները կարգադրել անյապաղ պահանջել և ժողովել»։ 19 օգոստոսի, թ. 1202։

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեանի անունով, որով պատուիրուեց օգոստոսի 23-ին Դայիանէի վանքում, ծայրագոյն վարդապետութեան աստիճան տալ Մայր Աթոռի միաբաններ Տ. Տ. Բագրատ և Մատթէոս վարդապետներին և վկայականները

ներկայացնել Նորին Սրբութեան ի հաստատութիւն։ 22 օգոստոսի, թ. 1208։

Կոնդակով առաջադրուեց ս. Էջմիածնի ս. Մինասին կարգադրել Մայր Տաճարի Իշման սեղանի առաջ երդուեցնել տալ Դիւանապետ և Գ. հոգևոր ճեմարանի Տեսուչ Տ. Բագրատ, Ռումինիայի Հայոց Հոգևոր Հովիւ Տ. Գնել, ս. Էջմիածնի Մինասի անդամ Տ. Մատթէոս, Արմաշու Դպրեվանքի փոխ-վանահայր և վերատեսուչ Տ. Մեսրոպ և Ադրիանուպոլսի Հայոց առաջնորդ Տ. Ղևոնդ Ծ. վարդապետներին՝ եպիսկոպոսական բարձր կոչում տալու համար։ 22 օգոստոսի, թ. 1209։

Նորին Վեհափառութեան մակագրութիւնը բժիշկ Կարապետ Տէր-Խաչատրեանի խնդրի վրայ. «Ընդունելով բժիշկ Կարապետ Տէր-Խաչատրեանի հրաժարագիրը՝ պատուիրում ենք ս. Էջմիածնի ս. Մինասին տնօրինել առաջիկայ սեպտեմբերի 1-ից հրաւիրել նոր բժիշկ»։ 26 օգոստոսի, թ. 1238։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի լուսարարապետին ս. Միւռոն տալ Յակովբ քահ. Խաչվանքեանին, Աղէքսանդրապոլի վիճակի համար։ 26 օգոստոսի, թ. 1239։

Կոնդակներ Տ. Տ. Բագրատ, Գնել, Մատթէոս, Մեսրոպ և Ղևոնդ Նորապատակ եպիսկոպոսների անունով, որով բացատրելով եպիսկոպոսական ծանր լուծը՝ յորդորուեց կատարել իրենց վրայ դրած եպիսկոպոսական պարտականութիւնը և Աւետարանի պատուէրը։ 27 օգոստոսի, թ. 1240—1244։

Կոնդակներ ընդհանրական Ադրիանուպոլսի, Ռումինիայի և Արմաշու Դպրեվանքի Հայոց քահանայական դասի, ժողովրդի բոլոր դասակարգերի անունով՝ Գնել, Մեսրոպ և Ղևոնդ Ծայրագոյն վարդապետներին եպիսկոպոսական աստիճան տալու մասին, իրենց ցանկութեան և ընտրութեան համաձայն։ 28 օգոստոսի, թ. թ. 1253, 1254 և 1255։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Տ. Գէորգ արքեպիսկոպոս Իւթուճեանին կարգադրել անյապաղ ուղարկել իւր նախկին պաշտօնատեղին՝ Ամերիկայում պաշտօնավարող Պետրոս քահ. Վարդանեանին։ 30 օգոստոսի, թ. 1274։

Դիւանի շրջաբերական գրութիւններով յանձնարարուեց Ռուսաստանի Հայոց թեմական առաջնորդներին, որ կարգադրեն իրենց թեմերում դպրոցական ֆօնդի օգտին ժողովող մարմինները՝ առաջնորդների միջոցով, կամ անմիջապէս, ուղարկեն ս. Էջմիածնի ս. Սինոդին իրենց մօտ ժողովուած գումարները և Նորին Վեհափառութեան գրաւոր զեկուցում տալ ուղարկած դրամի քանակի մասին։ 30 օգոստոսի, թ. թ. 1275—1280։

Դիւանի գրութեամբ առաջադրուեց Մայր Աթոռի վանական կառավարութեան պատրաստութիւն տեսնել Էջմիածին այցելող 20 Գերմանացի կալուածատէրերի և գիւղատնտեսների ընդունելութեան և հիւրասիրութեան համար։ 2 սեպտեմբերի, թ. 1288։

Կոնդակ Շամախու Հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց կարգադրել տալ թեմական արդիւնքից նախկին թեմական տեսուչ Տ. Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեանին նորա չստացած 469 բուբ. 58 կ. ռոճիկն ու բնակարանի վարձը։ 4 սեպտեմբերի, թ. 1293։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի ս. Սինոդին Մայր Աթոռի և ճեմարանի համար ընտրել մի վստահելի և փորձուած բժիշկ. պայմանները ձևակերպել և ներկայացնել Նորին Սրբութեան ի տնօրէնութիւն։ 4 սեպտեմբերի, թ. 1294։

Կոնդակ Տաթևի վիճակի Շնաթաղ գիւղի ծխական հոգաբարձութեան անունով, որով օրհնելով հոգաբարձութեան և ամբողջ համայնքին՝ թոյլատրուեց բանալ եկեղեցական-ծխական դպրոց։ 5 սեպտեմբերի, թ. 1305։

Կոնդակ Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական Խորհրդի նախագահի և անդամների անունով, որով յորդորուեց դրամական նպաստ տալ Օշականի ս. Մեսրոպեան եկեղեցական-ծխական դպրոցին՝ տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յիշատակը յաւերժացնելու համար, ս. Մեսրոպի գերեզմանին կից եկեղեցական-ծխական դպրոցի շէնք կառուցանելու համար: 5 սեպտ., թ. 1314:

Դիւանի շրջաբերական գրութիւններ թեմական առաջնորդների անունով (բացի Բեսսարաբ. առաջն.), որով առաջադրուեց զեկուցանել Նորին Վեհափառութեան, թէ քանի և որտեղերի ուսուցիչների համար են զիմում արել նահանգապետներին, ի՞նչ պատասխան են ստացել և որքան ժամանակից յետոյ: 11 սեպտեմբերի. թ. թ. 1332—1336:

Կոնդակ Տփխիսի Նպաստամատոյց Ցանձնաժողովի անունով, որով յորդորուեց իրենց մօտ մնացած 75,000 ռուբ. գումարը յատկացնել ազգատ հայ գիւղերում ծխական դպրոցներ բանալու և պահպանելու: 14 սեպտեմբերի, թ. 1346:

Կոնդակ օրհնութեան Մայր Սթոռի նախկին բժիշկ պ. Կարապետ Տէր-Խաչատրեանի անունով՝ նորա 17 տարուայ ծառայութեան համար: 14 սեպտեմբերի, թ. 1347:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Սանասարեան վարժարանի Խնամակալութեան բացատրել Նորին Վեհափառութեան, թէ ի՞նչու մինչև ցարդ չէ կատարուած Նորին Սրբութեան կոնդակը՝ կարինում նոր դպրոց բանալու մասին, որ գրաւոր խոստացել էր Խնամակալութիւնը: 14 սեպտեմբերի, թ. 1356:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Աստրախանի թեմական առաջնորդին պատշաճ կարգադրութիւն անել, որ շրջող հայ քահանաները այցելեն թեմի զանազան բանտարկուած հայերին և կատարեն նոցա հոգևոր պէտքերը, այլ և մխիթարել նոցա հոգեպէս: 18 սեպտեմբերի. թ. 1366:

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի հիւրընկալին Նորին Սրբութեան հաստատած հիւրատան կանոնները։ 20 սեպտեմբերի. թ. 1378։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Ատրպատականի թեմական առաջնորդ Տ. Ներսէս վարդապետին, որ Ատրպատականի թեմական դպրանոցի համար ծրագիրը կըմշակուի այն ժամանակ, երբ կըմշակուի Ռուսաստանի Հայոց թեմական հոգևոր դպրոցների կանոնադրութիւնը, որի մշակման համար նշանակուած է առաջիկայ դեկտեմբերի 10-ը։ 20 սեպտեմբերի, թ. 1385։

Կոնդակ Տփխիսի ս. Բեթղէհեմ եկեղեցու ծխական հոգաբարձութեան անունով, որով օրհնելով հոգաբարձութեան և բոլոր ծխականներին՝ արտօնուեց բանալ եկեղեցու գաւթում եկեղեցական–ծխական դպրոց։ 21 սեպտեմբերի. թ. 1390։

Դիւանի շրջաբերական գրութիւններով խնդրուեց Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհրդին, Մոսկուայի Հայոց եկեղեցական խորհրդին, Նոր-Նախիջևանի Բարեգործական Ընկերութեան վարչութեան, Նոր-Նախիջևանի Հայոց եկեղեցիների աղքատաց հոգաբարձութեան, Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան վարչութեան, Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան և Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան խորհրդին՝ ուղարկել մի-մի ներկայացուցիչ հոկտեմբերի 10—11-ին, երբ լինելու է ս. Էջմիածնում խորհրդակցութիւն Դպրոցական Ֆոնդի կազմակերպութեան և տոկոսների գործադրութեան եղանակի մասին։ 20 սեպտեմբ., թ. թ. 1391—1397։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց հանգուցեալ Եղոր Զոհրաբեանի պ. կտակակատարներին ուղարկել ժամանակաւորապէս Թաւրիզի կենդրոնական պդրոցի պահպանութեան համար կտակագումարի տոկոսները, մինչև որ վերջնականապէս կհաստատուի թեմական դպրանոցի ծրագիրը ու կանոնադրութիւնը։ 23 սեպտեմբերի, թ. 1398։

Կոնդակ Կ. Պոլսոյ Հայոց Նորընտիր պատրիարք Տ. Զաքէն եպիսկոպոս Տէր-Եղիայեանի անունով, որով արքութեան պատիւ շնորհուեց։ 24 սեպտեմբ., թ. 1408։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի ս. Սինոդին տալ Հայ տպագրութեան Մայր Աթոռի Յոբելենական Ճանձնաժողովին երեք հարիւր յիսուն (350) ռուբլի, Ծխական դպրոցներին նուիրելու համար գնած ս. Սահակի և Մեսրոպի պատկերների ծախքը հոգալու համար։ 24 սեպտեմբերի, թ. 1412։

Կոնդակ ս. Էջմիածնի ս. Սինոդի անունով, որի հետ ուղարկելով Ներքին Դորձոց Տ. Նախարարի գրութեան պատճէնը, առաջադրուեց կարգադրել ազատ կացուցանել Սինոդի անդամութիւնից Մայր Աթոռի միաբան Տ. Յուսիկ վարդապետ Զոհրաբեանին՝ Մոսկուայի Լազարեան ճեմարանում կրօնուսոյց կարգելու համար։ 25 սեպտեմբերի, թ. 1418։

Կոնդակ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց հրաւիրել Մայր Աթոռի միաբաններ՝ Տ. Տ. Կարապետ, Բագրատ և Մատթէոս եպիսկոպոսներին, Բարգէն և Ներսէս վարդապետներին և իւր նախագահութեամբ քննել Ռուսաստանի թեմական առաջնորդներից Ծխական կանոնադրութեան վերաբերեալ դիտողութիւններն ու փոփոխութիւնները, խմբագրել «Հայաստանեայց Առաքելական եկեղ. Ծխական կանոնադրութիւն» և ներկայացնել Նորին Սրբութեան ի տնօրէնութիւն։ 26 սեպտեմբերի, թ. 1421։

Նորին Սրբութեան գրութեամբ ծանուցուեց Մոսկուայի Արևելեան լեզուների ճեմարանի վերատեսուչ պրոֆեսոր Պաւել Վ. Գիդուլեանովին, որ Վեհափառ Հայրապետի միջնորդութեան համաձայն Թագաւոր Կայսրը բարեհաճել է արձակել Յուսիկ վարդապետ Զոհրաբեանին Սինոդի անդամութիւնից, ուստի և թոյլատրուում է նորան լինել ճեմարանում կրօնուսոյց։ 3 հոկտեմբերի, թ. 1507։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի ս. Մինասին վճարել հետզհետէ երեք հազար ռուբլի Յոբելենական Յանձնաժողովի անդամ Տ. Մուշէ վարդապետին՝ տնտեսական ենթամանաժողովի նախագահին, և տալ մի ժապաւինեալ մատեան հաշիւները պահելու և յոբելենական հանդէսներից յետոյ ներկայացնելու Մինասին ի գննութիւն։ 3 հոկտեմբերի, թ. 1521։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Տաճարի լուսաբարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսին ուղարկել Երևանի փոխ-թեմական միջոցով Հին-Նախիջևանի վիճակի Այարդիւղի եկեղեցուն մի ձեռք հին եկեղեցական զգեստ։ 3 հոկտեմբերի, թ. 1523։

Կոնդակ Տաթևի շրջանի Տուլորս գիւղի եկեղեցական-ծխական հոգաբարձութեան անունով, որով օրհնելով հոգաբարձութեան և ժողովրդին՝ թոյլատրուեց բանալ յիշեալ գիւղի եկեղեցու զաւթում ծխական դպրոց։ 4 հոկտեմբ., թ. 1532։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ.

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան Նոր-Բայազէտցի Հայրապետ Խաչատրեանի անունով՝ իւր ծախքով Հայոց եկեղեցական-ծխական դպրոցի համար սեպհական շէնք կառուցանելու առթիւ։ 3 օգոստ., թ. 1140։

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան երդուեալ հաւատարմատար պ. Գրիգոր Խաչերեսեան Զալխուշեանի անունով՝ Նոր Նախիջևանի դպրոցական ֆոնդի օգտին հանգանակութեան գործին սրտագին օգնութիւն ցոյց տալու առթիւ. 9 օգոստոսի, թ. 1141։

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան Տաճկահայ գործիչ Յակոբ Գուրգէնի անունով՝ Նորա քառասնամեայ գրական գործունէութեան յոբելեանը կատարելու առթիւ*։ 25 օգոստոսի, թ. 1232։

---

* Իւր կողմից ուղարկելով և մի հարիւր ռուբլի նպաստ։